տաւորն և առաջի արարեալ զամենայն գրեանս, յայտ արարին զանվայել գործս այլազգեաց, եւ աղաչեցին զնա՝ գրով ծանուցանել զիրս Արքային · զի զոնէ հրամանաւ նորին բարձցին հակառակութիւնք այլազգեաց, և նորա ընթերցեալ զվաւերական գրեանս, գրեաց ՚ի Դուռն ։ Իսկ Սուլթան Ահմէտ հրամայեաց գրել հրովարտակ վասն այսըր, կալ մնալ Հայոց ՚ի տեղւոջ յայնմիկ · զադարել այլազգեաց ՚ի տարապարտ ընդդիմութեանց, եւ զանհնազանդսն ծանուցանել ՚ի Դուռն · ՚ի ١ ճէմազիլ ախըր, ١٠٢٢ (1613)։

Գրիգոր Պարոն Տէր՝ որդի Մարգարի՝ զաւակ բարեպաշտ ծնողաց, էր ՚ի գաւառէն Վարանդայ · ՚ի սահմանս Ղանձակայ, (կենձէ) · ծնեալ ՚ի գիւղն սղխակաչէն, մերձ ՚ի վանս Եղիշէի Առաքելոյն՝ յաշխարհն Աղվանից ։ Ազգատոհմ սորա կոչին Վարդանանք · անուն հօրն Մարգարայ և մօրն Թուրվանտայ ։ Սա ՚ի տիս մանկութեան իւրոյ անկաւ ՚ի Թոնիր, և յազատիլ նորա անտի անվնաս · խոստացան ծնողք նորին նուիրել զնա յԵրուսաղէմ ՚ի տաճար Տեառն · կալ ՚ի սպաս ծառայութեան Աստուծոյ, որպէս երբեմն Սամուէլ ։ Սակայն կանխահաս մահ ծնողացն թերի և անկատար թողին զփափաք նոցին ։ Իսկ մանուկն Գրիգոր լուեալ իսկ էր ՚ի քահանայից զուխտ ծնողաց իւրոց, յորմէ տենջանօք փութացեալ եկն ընդ ազգակիցս իւր յԵրուսաղէմ · և յետ կատարելոյ զուխտն, դարձաւ անդրէն ընդ նոսա ՚ի հայրենիս իւր ։ Եւ ՚ի հասանիլ նորա յարբուն՝ ազգականք եւ մերձաւորք նորին՝ կամեցան մուծանել զնա ՚ի կարգ աշխարհի · այլ նորա արհամարհեալ զխորհուրդս նոցա և զբանս · խոյս ետ անտի՝ և եկն դարձեալ յԵրուսաղէմ (1581)։ Եւ կացեալ անդ առ ժամանակ մի՝ գնաց ՚ի Հռոմ յուխտ ՚ի շիրիմս Ս · Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, եւ անտի դարձ արար միւսանգամ յաշխարհ իւր · եւ ապա գնացեալ յարեցաւ ՚ի Պետրոս վարդապետ Կարկառեցի, որ եւ յետոյ նստաւ Կաթուղիկոս առանձին ՚ի Բերիա ։ Եւ նորա տեսեալ զուշիմութիւն Գրիգորի, զճարտարութիւն ՚ի բանս և զյաջողակութիւն ՚ի գործս՝ կացոյց զնա ՚ի վերայ մասնաւոր գործոց Երուսաղէմի, առանց կոչելոյ զնա յաստիճան եկեղեցականութեան ։